ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ծննդյան 110-ամյակի առթիվ)

Հայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, անվանի գիտնական Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում, 1887 թ. Հունիսի 17-ին, հողևորականի ընտանիքում։ Նախնական կրթություն ստացել է հայրենի քաղաքում՝ ավարտելով տեղի ռեալական դպրոցը 1906 թ.։ Նա ստեղծագործական ասպարեզ մտավ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ սոցիալիստական գաղափարները համակել էին շատերին, հույս ու հավատ էին ներշնչում, թե իրականացման դեպքում վերջ կդնեն բռնապետական կարգերին, կազատագրեն ճնշված ու տառապող ժողովուրդներին, կբացեն նրանց զարգացման համար լայն հորիզոններ, կստեղծեն հավասարություն ու եղբայրություն և, ինչպես կերազեր ինվանի բանաստեղծը, հաշտ ու իաղալ մարդկություն։

Տեսնելով Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական ուժը և հավատալով բոլշևիկների քարոզչություններին, թե իրենք նրա արմատական շահերի կենսական արտահայտիչներն են, Աշոտ Հովհաննիսյանը 1906 թ. զինվորագրվեց նրանց ջոկատներին և սկսեց զբաղվել քաղաքական աշխատանքով։ 1917 թ. հեղափոխության օրերին ղեկավարել է Բուրվի խորհրդի կուլտուր-լուսավորական բաժինը, իսկ 1918 թ. աշնանից մինչև 1920 թ. գարունը աշխատել է Մոսկվայում, որպես Հայկական զորքերի կոմիսարիատի պատմագրական բաժնի վարիչ։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Աշոտ Հովհաննիսյանը նշանակվել է հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսար և ստորագրել կրթական, մշակութային մի շարք հիմնարկների, այդ թվում նաև պետական թատրոնի ու համալսարանի ստեղծման դեկրետներ։ 1922 թ. ընտրվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար՝ աշխատելով այդ պաշտոնում մինչև 1927 թ.։ 1929 թ. տեղափոխվել է Մոսկվա և մինչև 1934 թ. Մարքսի-Էնգելսի ինստիտուտում ղեկավարել միջազգային հարաբերությունների պատմության կաբինետի աշխատանքները։ 1934—1937 թթ. եղել է Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ և նրա՝ Մոսկվայի բաժանմունքի տնօրեն։

1937 թ. ստալինյան դրածակալները բազմաթիվ արդար մարդկանց հետ միասին ձերբակալեցին նաև Աշ. Հովհաննիսյանին և հալածանքների ենթարկեցին երկրի տարբեր վայրերում։ Նա մեկը եղավ այն քչերից, որոնք ողջ ու առողջ ազատվեցին ստալինյան ճիրաններից և վերադարձան աշխատանքի։ Դա

թե նրա և թե մեր գիտության, մասնավորապես պատմագիտության համար երջանիկ պատահականություններից մեկն էր։

Աշոտ Հովհաննիսյանը ծնվել էր ոչ միայն, և ոչ այնքան հասարակական-քաղաքական, որքան գիտական գործունեության համար։ Դեռ երիտասարդ տարիներին նա թողեց հայրենի Շուշին և սովորելու համար մեկնեց Գերմանիա։ Հալլեի ու այլ համալսարաններում ունկնդրելով բանիմաց գիտնականներին՝ ստացավ հիմնավոր կրթություն և իրեն նվիրեց հայ ժողովրդի ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրությանը։ 1913 թ. Մյունխենում գերմաներեն հրատարակեց «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» վերտառությամբ աշխատությունը, որի համար ստացավ փիլիսոփայության դոկտորի աստիճան։

Աշոտ Հովհաննիսյանը այնուհետև վերադառնում է Կովկաս, պաշտոնավարում Շուշիի թեմական դպրոցում, ապա տեղափոխվում է Վաղարշապատ և Գևորգյան ճեմարանում դասավանդում ընդհանուր պատմություն, քաղաքատնտեսություն, լատիներեն ու գերմաներեն։ Միաժամանակ, գրում է գիտական լուրջ արժեք ներկայացնող հոդվածներ, որոնք լույս են տեսնում «Արարատ» ամսագրում կամ առանձին գրքույկներով։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Աշ. Հովհաննիսյանը նոր թափով է շարունակում իր դիտական հետազոտությունները։ Աշ. Հովհաննիսյանը նույնիսկ այն օրերին, երբ Հանրապետության կոմկուսի առաջին քարտուղարն էր, դուրս չէր գալիս արխիվներից ու գրադարաններից։

Ուսումնասիրելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունը՝ Աշ. Հովհաննիսյանը սկզբից ևեթ հարում է Մ. Նալբանդյանի ու Ստ. Շահումյանի այն ճիշտ տեսակետին, որ հայ ժողովրդի փրկությունը սերտորեն կապված է Ռուսաստանի հեղափոխական շարժումների հաղթանակի հետ։ Նա խստորեն քննադատում էր ազգային հոգևոր ու բուրժուական այն գործիչներին, կուսակցական դաղափարախոսներին, որոնք փորձում էին հայ ժողովրդի ազատագրումը կապել իմպերիալիստական տերությունների նվաճողական քաղաքականության հետ։ Իր աշխատություններում գիտնականը ցույց է տալիս Ռուսաստանի ու ռուս ժողովրդի բարերար ազդեցությունը հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի վրա և վեր հանում արևմտաեվրոպական պետությունների զաղութային վարքագծի տիպերիչ հետևանքները։

Ստալինյան հալածանքները փորձում էին զրկել դիտնականին ստեղծագործական աշխատանքներից։ Անգամ այն ժամանակ, երբ նրան թույլ էր տրվել բնակվել Հայաստանում, բայց ոչ Երևանում, հանրապետության ղեկավարներից ոմանք խոչընդոտում էին նրան մտնել Մատենադարան, խափանում նրա հետազոտական աշխատանքները, նշելով, թե նա անարժան է մոտենալ մեր սրբություններին։ Աշոտ Հովհաննիսյանը դիմում է Հայաստանի կենտկոմի բյուրոյին՝ խնդրելով թույլ տալ իրեն տեղափոխվել Երևան և շարունակել իր դիտական ուսումնասիրությունները։ Նա նշում է, որ ինքն արդեն 60-ն անց մարդ է, այլևս չի զբաղվում քաղաքականությամբ, ուզում է ապրել Երևանում և ավարտել իր կիսատ թողած աշխատանքները։ Կենտկոմի բյուրոյի անդամները փորձեցին իրենց «մարտական» ելույթներով մերժել գիտնականի ինդրանքը։ Բայց քարտուղար Գր. Հարությունյանը հարգում է նրա դիմումը՝ ներկաներին հայտարարելով, թե՝ «մի մոռացեք, որ մի ժամանակ այս աթոռին նա է եղել նստած»։

Աշոտ Հովհաննիսյանը, նյութական կարիքից դրդված, դիմում է որոշ դեկավարների՝ խնդրելով աշխատանք։ Դիմումում նա նշում է, որ ինքը դիտի դերմաներեն, կարող է օգտակար լինել Մարքսի ու Էնգելսի գործերի թարգմանություններում։ Նրան առաջարկում են լաբորանտի հաստիք։ Գիտնականը պատասխանում էր, որ նման մարդիկ փորձում էին նյութական ճնշման ենթարկել անգամ իր տիկնոջը՝ Ա. Ուրարտուին, նշանակել դաժ աշխատավարձ, հայտարարելով, որ նրա աշխատավարձով ապրում է ժողովրդի թշնամին։

Բայց Աշոտ Հովհաննիսյանը ոչ միայն չի ընկճվում, այլև համառորեն շարունակում է իր գիտական հետազոտությունները։ Նա գիտեր, որ «ձախորդ օրերը ձմռան նման կուղան ու կերթան», որ իր աշխատանքն իզուր չի անցնի։ Եվ այդպես էլ եղավ։ Ստալինի մահից հետո վերջ դրվեցին Աշ. Հովհաննիսյանի հանդեպ գործադրվող հալածանքներին։ 1954 թ. նա արդեն աշխատանքի է ընդունվում Հայաստանի գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտական աշխատող։ Գիտնականի առաջ բացվեցին հրատարակության դռները։ Մեկը մյուսի ետևից նա սկսեց լույս ընծայել երկար տարիների ընթացքում իր ստեղծած ստվարածավալ հետազոտությունները։ 1955 թ. հրատարակվեց պատմաբանի «Նալբանդյանը և նրա ժամանակը. դրքի առաջին, իսկ 1956 թ.՝ երկրորդ հատորը։ Այդ աշխատության մեջ հեղինակը վերլուծում է ոչ միայն մեծ մտածողի հասարակական-քաղաքական հայացքները, ընդգծում նրա խաղացած հսկայական առաջադիմական դերը հայ կյանքում, այլև ներկայացնում է հայ իրականությունը, հասարակական տարբեր հոսանքները, նրանց միջև տեղի ունեցած բախումները։ Գիտնականի այդ աշխատությունը յուրատեսակ հանրագիտարան է։ Ովքեր կզբաղվեն XIX դ. հայ նշանավոր գործիչներով, չեն կարող շրջանցել այն։ Միքայել Նալբանդյանի մասին շատ են գրվել աշխատություններ, բայց Աշ. Հովհաննիսյանի ստեղծածն իր ընդգրկումներով ու խորությամբ գերազանցում է բոլորին։

1957 թ. պատմաբանը լույս ընծայեց իր մի այլ կապիտալ աշխատության («Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության») առաջին, իսկ 1959 թ.՝ երկրորդ հատորը։ Նա հանգամանորեն ներկայացնում է հայ ազատագրական մտքի պատմությունը՝ սկսած խոր միջնադարից մինչև XVIII դ. ընկած ժամանակաշրջանը։ Գիտնականը կանգ է առնում հայերի՝ հատկապես ռուսական կողմնորոշմանը նախորդած արևմտաեվրոպական բանակցությունների վրա, վերապատկերելով պատմական այն հանգամանքները, որոնք նախապատրաստել են հայ ժողովրդի քաղաքական գիմաշրջումը դեպի Մոսկովյան պետությունը։ Նա մանրամասնորեն գծագրում է Իսրայել Օրու կյանքի ու գործունեության քննական պատկերը՝ ներկայացնելով հայ ազատագրական մտքի զարգացման նախընթաց փուլին առնչվող նրա կապերը և վեր հանելով դարակազմիկ այն շրջադարձը, որ կատարեց Օրին իր ժողովրդի ազատագրական ակնկալությունները բացառապես Ռուսաստանի հետ լծորդելու ուղղությամբ։ Աշ. Հովհաննիսյանի «Դրվագները...» գերազանցում են մինչև այժմ նման թեմաներով եղած հետազոտությունները և միաժամանակ ուղիներ են բացում նոր ուսումնասիրությունների համար։

1964—1967 թթ. Աշ. Հովհաննիսյանը Վազգեն Հակոբյանի ու Սոֆյա Տեր-Ավակիմովայի հետ միասին կազմեց երկու ծավալուն հատորով «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամյակում» խորագիրը կրող վավերագրերի ժողովածուն։ Այդ ժողովածուի ընդարձակ առաջաբանում նա վերլուծում է երկու ժողովուրդների միջև եղած տնտեսական, քաղաքական ու ռազմական առնչությունները, որոնք կարևոր դեր խաղացին հետագայում Արևելյան Հայաստանի ազատագրման գործում։

Համարյա այդ նույն ժամանակաշրջանում Աշոտ Հովհաննիսյանը գրեց «XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները», «Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (1860—1870-ական թվականներին)», «Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները» և այլ հոդվածներ, որոնք լույս տեսան հանրապետության տարբեր ամսագրերում։ Գիտնականն այդ հոդվածներում ցույց էր տալիս հայ երիտասարդների ակտիվ մասնակցությունը համառուսական հեղափոխական շարժումներին, ապա նրանց դիմագարձը դեպի ազգային խնդիրները, Հայկական հարցը, դեպի արևմտահայության փրկությունը։ Նա միաժամանակ լուսաբանեց XIX դ. վերջին հայ իրականության մեջ առաջ եկած քաղաքական խմբակների ու կազմակերպությունների պատմությունը և ցույց տվեց նրանց կազմալուծման ու ազգային կուսակցությունների առաջացման գործընթացը։ Պատմաբանը անդրադարձավ

հատկապես դաշնակցության ձևավորմանն ու զարգացմանը և ստեղծեց հատուկ աշխատություն նրա մասին։ Այդ աշխատության մեջ նա ավելի հիմնավորեց ու զարգացրեց իր այն տեսակետը, որ դաշնակցությունը եղել է մանրբուրժուական կուսակցություն։ Բայց գիտնականի այդ գիրքը լույս չտեսավ և մինչև հիմա մնում է ձեռագիր վիճակում ու պահվում է Մատենադարանի իր ֆոնդում։ Խանգարեց Հանրապետության Կենտկոմի գաղափարական ղեկավարությունը։ Սկզբում առաջարկեցին հեղինակին, որ նա սահմանափակվի ոչ թե 1905 թվով, այլ 1920 թվով, որ դաշնակցության քննադատությունը լինի ավելի կատարյալ։ Աշոտ Հովհաննիսյանը կատարեց այդ պահանջը։ Ապա առաջարկեցին հասցնել մինչև 1945 թ.։ Գիտնականը հասկացավ, որ դա խաբեություն է, բայց այդ էլ կատարեց։ Այդուհանդերձ գիրքը չհրապարակվեց։ Թող չստեղծվի այնպիսի տպավորություն, թե Աշոտ Հովհաննիսյանը դաշնակցության պաշտպան էր։ Ոչ, իբրև բոլշևիկ, նա խստորեն քննադատում էր այդ կուսակցությանը։ Սակայն գիտնականը չէր ուրանում դաշնակցության նաև դրական, հայրենասիրական գործերը։ Հանրահայտ է, որ նա գրեց Թուրշյանի գրքի առաջաբանը՝ դնելով Սարդարապատի ճակատամարտը Ավարայրի կողքին, իսկ Սարդարապատի հերոսամարտը, ինչպես հայտնի է, ղեկավարում էր դաշնակցությունը։

Աշ. Հովհաննիսյանը անողոք էր նաև բոլշևիկների թույլ տված սխալների հանդեպ։ Նա մերժում էր այն պատմաբաններին, որոնք 1921 թ. Հայաստանում կատարվող դեպքերը համարում էին դաշնակցության կողմից կազմակերպած արկածախնդրություն։ Գիտնականը հայտարարում էր, որ այդ դեպքերի պատճառը բոլշևիկների թույլ տված սխալն էր։ Նրանք, անցնելով իշխանության գլուխ, Ռուսաստանում գործած պարենամատնարման քաղաքականությունը մեխանիկորեն կիրառեցին Հայաստանում, իրենց թշնամի դարձրին գյուղացիներին, որոնք բոլշևիկյան բռնություններից ու հարստահարումներից փրկվելու համար ստիպված եղան զենքի դիմել։ Գյուղացիների ելույթներից հետո միայն դաշնակցականներն անցան նրանց ապստամբության գլուխ։ Պատմաբանը շեշտում էր նաև բոլշևիկների խոստմնադանցություններից մեկը, որոնք պայմանավորվեցին ձախ դաշնակցականների հետ միասին կառավարել Հայաստանը, բայց անցնելով իշխանության գլուխ, քշեցին նրանց իշխանությունից։

Աշ. Հովհաննիսյանը մեծ գործ կատարեց հայ ժողովրդի պատմության 8-հատորյակի ստեղծման համար։ Իբրև գլխավոր խմբագիր՝ խմբագրեց առաջին հատորը, ապա շարադրեց 5-րդ և 6-րդ հատորների՝ հասարակական հոսանքների ու ազգային կուսակցությունների բաժինները։ Ցավոր, նա չհասցրեց խմբագրել 6-րդ հատորը։ Բայց խմբագրական մարմինը, նրա ազդանունը նշեց իբրև հատորի խմբագրի՝ ի նշան երախտագիտության։

Գիտնականի հետազոտությունների հիմքը մարքս-լենինյան մեթոդաբանությունն էր։ Նա խորապես ուսումնասիրել էր Մարքսին ու Էնգելսին, հանգամանորեն գիտեր Լենինին, իր գիտական ուսումնասիրություններում ղեկավարվում էր նրանց գրույթներով։ Մեր պատմագրության մեջ առաջին մարքսիստ պատմաբաններից էր, բնդ որում ոչ թե մոդայիկ, այլ իսկական, համոզված մարքսիստ էր։ Աշ. Հովհաննիսյանը լավ գիտեր նաև Ստալինին, բայց ասում էր նրան։ Եվ ինչպես կարող էր չատել, երբ սեփական մաշկի վրա զգացել էր նրա բռնությունները, ականատես էր եղել նրա գործադրած ոճրագործություններին։ ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության XX համագումարից հետո գիտնականը (հստակ չեմ հիշում՝ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդում, թե կուսակցական ժողովում) հանդես եկավ մի ընդարձակ զեկուցումով, որտեղ բավական հանգամանորեն ցույց տվեց Ստալինի անձի պաշտամունքի առաջացման ընթացքը և նրա վնասակար հետևանքները՝ երկրի համար ընդհանրապես, նրա գիտության ու մշակույթի համար՝ մասնավորապես։ Որքան գիտեմ, պատմաբանի այդ զեկուցումը չի հրատարակված։ Հավանական է, ինքը խուսափեց հրատարակելուց, որովհետև խրուշչովյան պարզ երկինքը շուտով մոայլվեց սուսլովյան մութ ամպերով։

Աշ. Հովհաննիսյանը մեծ հեղինակություն էր, գնահատված գիտնական. վայելում էր շատ-շատերի սերն ու համակրանքը։ Պատահական չէ, որ 1960 թ. ակադեմիկոսների ընտրությունների ժամանակ Պատմության ինստիտուտի դիտական խորհուրդը շրջանցեց ակադեմիայի թղթակից անդամի աստիճանը և նրա թեկնածությունը առաջադրեց ակադեմիայի իսկական անդամության համար։ Պրոֆ. Վ. Աշտունին այդ նիստում հայտարարեց. «Թող բոլորը ետ վերցնեն իրենց թեկնածությունները, թող մնա միայն ընկեր Աշոտինը։ Եթե ակադեմիկոսի տիտղոսը,— շարունակեց նա,— պատիվ է բերում ուրիշներին, ապա նրա ակադեմիկոս ընտրվելը պատիվ կբերի ակադեմիային»։ Եվ գիտնականը ընտրվեց Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։

Աշ. Հովհաննիսյանը որպես մարդ ու գիտնական ինքնատիպ էր. ասում ու գրում էր այն, ինչ մտածում էր, առանց վերջ ու ներքն նայելու, հաճախ էր կրկնում, որ գիտության մեջ ինքը չունի ընկեր, բանավիճում էր երիտասարդական ավյունով, դրսևորում էր երկաթյա տրամաբանություն։ Անվանի գիտնականը, սակայն, դյուրահավատ էր, որ հատուկ է պարզ ու անկեղծ մարդկանց։

Աշոտ Հովհաննիսյանի հետազոտությունները հատկանշվում են գիտական բարձր մակարդակով, շարադրված են փաստական հարուստ նյութի հիման վրա և աչքի են ընկնում խորը վերլուծումներով ու ընդհանրացումներով։ Նրա լեզուն ինքնատիպ է և ուսանելի։ Ոմանք փորձեցին գիտնականի աշխատություններից մեկը (եթե չեմ սխալվում «Նալբանդյանը...») թարգմանել ռուսերեն։ Բայց թարգմանիչը, որքան էլ լավ դիտեր ռուսերեն, հրաժարվեց, հայտարարելով, որ անհնար է պահպանել այն հարստությունն ու հմայքը, որ ունի Աշ. Հովհաննիսյանի հայերենը։

Հասարակական-քաղաքական և գիտական ակտիվ գործունեության համար Աշ. Հովհաննիսյանը արժանացել է հայրենիքի բարձր պարգևին՝ Լենինի շրջանշանի։ Անշուշտ, Աշոտ Հովհաննիսյանը թույլ է տվել սխալներ, վրիպումներ, ունի մերժելի դրույթներ։ Դրանք անխուսափելի էին, մանավանդ նրա համար, որը գործել է պատմական այնպիսի ժամանակաշրջանում, երբ առաջանում էին նոր երևույթներ, որոնք հաճախ բացարձակապես ժխտում էին նախորդները։ Բայց պատմաբանի ստեղծած դրական արժեքներն այնքան շատ են ու մեծ, որ ծածկում են նրա սխալները։

Աշ. Հովհաննիսյանը շուրջ 20 տարի աշխատեց պատմության ինստիտուտում, որից 11-ը՝ որպես նոր պատմության բաժնի վարիչ։ Աշխատակիցները, հատկապես երիտասարդները, հաճույքով լսում էին նրան ու սովորում։ Եվ այսօր, երբ նրանք հասակ են առել ու գնում են դեպի ծերություն, մեծ երախտագիտությամբ են հիշում իրենց ուսուցչին։ Արդեն 25 տարի է, որ չկա Աշոտ Հովհաննիսյանը։ Որքան շատ ժամանակ է անցնում, այնքան նա վեհանում է մեզ համար, այնքան նա վառ է փայլատակում հայ պատմագիտության դասականների սրանչելի համակարգում։

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ
Պատմագիտության դոկտոր-պրոֆեսոր